

Այս անընթեքի ս. խոստովանողին վիճակուեցաւ մինչեւ իսկ վախճուիլ նաեւ Արտաշատու խոր և խաւարչտին վիրապի մէջ. Հայոց ապագայ լուսաւորուն երկար երկար տարիներ¹ արգելուեցաւ այդ տարօրինակ բանտի մէջ աքնելու և երկնելու Հայոց հոգեւոր վերածնութեան ապագան: Երկնաւոր հրաւիրակի ձայնին հետեւելով, նա ընդունեց, ի վերջոյ, կոչումն հոգեւոր մշակի, երկրագործի, սերմանացանի, որի քրտանց ասպարէզն էր Հայոց երկիրն, և աշխատութեան նպատակը՝ մի ամբողջ ազգ ու աշխարհ ազատել հեթանոսական կուրութիւնից: «Եւրսերմանեա՛ սերմահատ քաջ, գետնանիս աւետարանին լուսոյ, ել անկեա՛ մշակդ քրտնեալ, զորթն կենաց, զողկոյզն ծաղիկեալ, զմշակեալն ի Հօրէ, զարիւն խաղողոյն վիայեալ սուրբ աջովդ» կոչում է երկնային ձայնը ս. Հռիփսիմեանց բերանով խոր վիրապի արգելականին: ² Բողոքաւոր աշխարհ, երջանիկ վիճակ, որ, կարծես, կարողացել է միայն ս. խոստովանողի մեծ համբերութեան օրինակն զգենուլ և դարեր շարունակ ապրել ու զործել այդ համբերութեան ոգով:

Երբ մենք այն մեծ խոստովանողի Մտին ի վիրապն յիշատակը կատարելու բարեբաղդութիւնն ենք վայելում արդեօք մի վարկեան մտածեցի՞նք զգացի՞նք, որ 1600 տարի յառաջ «այր մի անաշխարհիկ և օտարական, կրեց Հայոց վերածնութեան և վերակենդանութեան այն ծանր երկունքը, որի շնորհիւ կեանք ու կենդանութիւն վաճելից Հայ ազգը: Եթէ զգացի՞նք, ապա և պարտք ունինք շնորհելու նոյն համբերութեան օրինակը և երախտապարտ հոգեով պահպանելու նորա անօրինակ քրտանց արդիւնքը: Չմոռանանք այն պատգամը, որ Խոսրովիդուխա ընդունեց իբրեւ յայտնութիւն Աստուծոյ. ³ «յղեմջիք դուք ի քաղաքն Արտաշատ ամեկ անտի զկապեալն Դրիգորիոս. Ես եկեալ ուսուցէ ձեզ զդեղ ցուողը ըծշկութեամբ»:

Կ. Կ.

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՒՄ

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՅԻ

— Լեոն ԺԳ. պապը կարեւոր է համարել մի նոր քննութիւն և սահմանադրութիւն հրատարակելու արգելուած գրքերի (ինդէքս) վերաբերութեամբ: Այդ սահմանադրութեան յառաջաքանում պապը խօսում է մեր ժամանակույ շանսանձ գրչամուրութեան և վատ գրքերի մեծաքանակ տարածման մասին: Անասակար գրքերի մասին իրենց գատաւժիւր կարգացել են արդէն իսկ Վէքսանդր Զ., Լեոն Ժ., Պօղոս Գ. և այլ պապերը, սակայն ժամանակների փոփոխութեան պատճառով այժմ ևս կարեւոր է մի նոր քննութիւն և նոր ուղեցոյց վրնասակար գրքերի վերաբերութեամբ, ուստի և ինքը Զ. յօդուածից լազկացած մի նոր սահմանադրութիւն է տալիս՝ արգելուած գրքերի տեսակները որոշելու համար:

Պապական այս սահմանադրութիւնը տան գլխի է բաժանուած, որոնք են. ա) արգելումն առաքելոց գրքերի, հերձուածողների և այլ մատենագիրների շարագրութիւնների. բ) արգելուած հըրատարակութիւններ և թարգմանութիւններ ս. Գրքոց. գ) արգելումն զանազան ազգային լեզուներով թարգմանութիւնների. դ) լիտի բովանդակութեամբ գրքերի արգելումն. ե) արգելումն այն մասնաւոր հրատարակութիւնների, որոնց մէջ սրբազան իրեր են ծաղրուում. զ) սրբոց պատկերների և թողութեան թղթերի մասին. է) աղօթից և ժամանակագրութեանց գրքերի մասին. ը) պարբերական հանդէսների և թերթերի մասին. թ) արգելուած գրքեր ունենալու և կարգադու իրաւունքի մասին. ժ) մատնութիւն վնասակար գրքերի դուրսութեան մասին:

Այս գլխների մէջ առանձինն յիշատակուած են արգելուած գրքերի տեսակների և բովանդակութեան մասին: Հետաքրքրական է որ արգելուած գրքերի մէջ են բոլոր Աստուածայնչի ընկերութեանց հրատարակած և ոչ կաթոլիկների ձեռքով թարգմանուած ս. Գրքերը:

Այս որոշումներից յետոյ հինգ գլխների մէջ, որոնք բաժանուած են 19 յօդուածների, պապը հոգեւոր զբաղնութեան կանոններն է սահմանել:

— Այս տարուան մայիս ամսին լինելիք եկեղեցական ժողովի (կոնսիստորիում) համար պատրաստութիւններ են տեսնուում: արդէն իսկ տեղեկագրեր են ներկայացուած պապին մի քանի քրիստոնեայ վկաների մասին, որոնց պապը պէտք է սրբութեան անտիճանին արժանի հրատարակէ: Զարմանալի չէ՞ արդեօք, որ մեղաւոր մարդիկ են

1. Ագթանգեղոս ԺԱ. ԽԲ.

2. Մ. Խոր. Ներքող Հռիփսիմեանց.

3. Ագաթ. Խ.

քրիստոնեայ վկաներին սրբացնողներն և այն էլ մեր դարում:

Նոյն կոնստիտուցիայում ծիրանաւորութիւն պիտի տայ պապը մի քանի Քրանսիացի և Իտալացի եպիսկոպոսներին:

— Լեոն ԺԳ. զրազուած է այժմ մի նոր հովուականով, որ պիտի ուղղէ հիւսիսային Ամերիկայի եպիսկոպոսներին: Այս տարի Ամերիկայի եպիսկոպոսները պիտի մի ժողով գումարեն առաքելական նուիրակ Մարտինելլի Նախագահութեամբ: պապը կամենում է որոշել այն խնդիրներին սահմանները, որոնցով պիտի այդ ժողովն զրազուի:

— Ամանգայի կաթողիկոսների մէջ զպրոցական խնդրի վերաբերութեամբ տարաձայնութիւններ են ծագել, ուստի պապը մի նուիրակ պիտի ուղարկէ այդ խնդիրը քննելու համար:

— Հիւսիսային Ամերիկայում կաթողիկոսների թիւն հետզհետէ աճում է, մանաւանդ Իւլանդիայից, Իտալիայից, Լեհաստանից և Փոքր—Ասիայից հասած գաղթականների շնորհիւ: 1896 թուին կատարուած մի վիճակագրութեան հիման վրայ կաթողիկոսներն հաշուում են 8,271,309 հոգի, իսկ կաթողիկ թերթների ասելով՝ այդ թիւն աւելի ևս մեծ է:

— Այս տարի մարտի 1-ին Լեոն ԺԳ. առանձին շքեղութեամբ է տոնել իւր գահակալութեան 19-րորդ տարին: Ի պատիւ այդ տարեդարձի պապի ծննդավայր Պարպիւնետո քաղաքում կանանց մի հիւանդանոց է բացուել յատկապէս Լեոն պապի միջոցներով: Հիւանդանոցը կառուցած և կահաւորուած է գիտութեան նորագոյն պահանջներին համաձայն:

— Գերմանական ազգային ժողովում քննւում է տէրութեան առաջարկը նաւատորմից զօրացնելու կաթողիկ կուսակցութիւնը, որ կոչուում է կենդրոնի կուսակցութիւն: պայման է դրել ընդունելու կառավարութեան առաջարկն, եթէ յետ առնուին 1872 թուին յիսուսեաններին Գերմանեայից արտաքսելու օրէնքները, Հեռագիրն արդէն հաղորդեց, որ ազգային ժողովը մերժել է դրամ տալու նաւատորմին համար, ուրեմն կենդրոնը կըրկին ցոյց է տուել իւր մեծ ոյժը:

— Ռուսաց կառավարութեան Վատիկանի դեսպան Իզվոլսկու փոխանակ նշանակուել է Զարիկովը, որ ցարդ Ռուսաց տէրութեան ներկայացուցիչն էր Բոլշարիայում: Կաթողիկ թերթները շատ են արիստոսում այդ փոփոխութեան վրայ, որովհետեւ շնորհիւ Իզվոլսկու միայն պապի և Ռուս կառավարութեան յարաբերութիւնները բարեկամական դարձան:

— 1900 թուին քրիստոնէութեան յօրեկեան տոնելու համար մեծ պատրաստութիւններ են տեսնուում Հռոմում:

— Յայտնի է՝ թէ ի՞նչ մեծ գեղարուեստական և հնագիտական հարստութիւն ունի Վատիկանը: այժմեան պապն ևս իւր նախորդների պէս սիրահար է գեղարուեստի: Շնորհիւ պապի առատաձեռնութեան վերանորոգուած է այժմ Բորջեաների անունով կոչուող սրահը, որի բացումը տեղի է ունեցել փետրուարի վերջին:

— Սերրիայի կառավարութիւնն մի յատուկ պատգամաւոր է ուղարկել Հռոմում պապի հետ Սերրիայի կաթողիկոսների մի դաշնադրութիւն (կոնկորդատ) հաստատելու համար:

— Մեծի պահոց օրերին Ֆրանսիական եպիսկոպոսները շրջաբերականներ են ուղղել իրենց թեմերի ժողովրդին, որոնց ցոյց են տալիս այն ուղին, որով կարող են նրանք պահպանել իրենց կաթողիկոսութիւնը ժամանակի հանգամանքների հետ կոտուելով: Հին քրիստոնեայ եկեղեցու այս գեղեցիկ սովորութիւնն ափսոս որ հետզհետէ վերանում է առհասարակ արեւելեան եկեղեցիներում, ու դեռ մեծ կարիք կայ քրիստոնեայ վկաների հաւատը զօրացնելու համար:

— Պանայիա Պապուլի. ահա այն նոր ուխտատեղու անունն, որ կաթողիկ եկեղեցին անցեալ տարուան մայիսի 15-ին սրբազործեց: Շատ հետաքրքրական է այդ ուխտատեղու ծագման պատմութիւնը: Կաթողիկ կոյսերից մին, Վատարինա Էմմերիկ, որ յայտնի է իւր տեսիլներով և որին կաթողիկոսներն անգամ մեծ հաւատ չէին ընծայում: տարիներ առաջ իւր տեսիլներից մէկում յայտնել էր, որ սուրբ կոյսն իւր կեանքի վերջին 9 տարին Եփեսոսի մօտ է անցրել, ուսկից և երկինք է վերացել: Աստուածածնի այդ բնակութեան վայրը գտնուել է Եփեսոսից դուրս մի լեռան ստորոտում: ուր ապա նորա անուան նուիրուած մի տաճար է կանգնած: Այս հիւանդոտ կոյսի երեակայութեանց ու զառանցանքների վրայ երկար ժամանակ ոչ որ ուշք չէր դարձրել մինչև 1891 թ. երբ Զմիւռնիոյ կաթողիկ «ողորմած քոյրերի» մայրը հետազոտութիւններ սկսել տուաւ սուրբ կոյսի այդ բնակավայրը գտնելու համար: Այդ ցանկալի վայրը գտնուեցաւ ճիշտ մի այնպիսի տեղում, որպիսին Էմմերիկն էր նկարագրել և չը նայելով կաթողիկ եկեղեցու բարձրաստիճան առաջնորդների անհաւատութեամբ վերաբերուելուն, այսու ամենայնիւ այդ հին աւերակ մատուռը նորոգուեցաւ և այժմ մեծ ուխտատեղի է: Պանայիա կոչում են յոյներն սուրբ կուսի ամեն մի տաճարը, իսկ կապուլա թուրքերէն դափու = դուռն է յունարէն վերջաւորութեամբ: այնպէս որ այդ սրբավայրն իսկապէս կոչուում է սուրբ Աստուածածնի տաճար գտնով:

Կաթողիկ եկեղեցին նոր սրբեր և սրբավայրեր ստեղծելով կարծում է արդեօք որ մարդիկ աւելի

կը սորանան: Թէ՛ իւր արդիւնքների համար նորա-
նոր զոներ է բանում:

— Մասունների դազանիքներն ի վեր հանող
միսս Առգանը երեք ամիս լուելուց յետոյ իւր յի-
շատակարանի տասնէւորսերորդ տետրն է հրատա-
րակել: Երից այդ գիւական օրիորդի երեակայու-
թեան հարստութիւնն է երևում: Սկզբում այնպէս
էր թուում որ կաթողիկ եկեղեցին համոզուեցաւ՝
թէ այդ օրիորդի պատմութիւնն և ի վեր հանած
դազանիքներն կեղծիք էին: Այս խնդրի քննու-
թեան համար որոշուած յանձնախումբն այժմ մի
բացադուրթիւն է հրատարակել: Երի մէջ յայտ-
նում է՝ թէ իւր քննութիւնների վրայ հիմնուե-
լով չէ կարող ոչ հաստատել և ոչ մերժել այդ
օրիորդի կաթողիկ գառնան ու նրա մերկացումների
ստուգութիւնը: Պարզ է, որ դեռ ևս կամենում
են կեղծիքներով մրցել մասնականութեան գէմ և
կաթողիկ ժողովրդին սովորական անտիպապաշտու-
թեան մէջ պահել:

ՕՐԹՈՂՈՒՔՍ ԵԿԵՂԵՑԻ:

— Էկլէէն ազգն ու եկեղեցին մեծ տաքնապի
մէջ է. այսօր նա իրեն մի մարդ կուռի է դուրս
եկել Տաճկի գէմ իւր արիւնակիցներին ու հաւա-
տակիցներին պաշտպանելու Արեւտէ կղզում:

Մենաստաններում ճգնող կուսակցութիւններն ան-
գամ կամաւոր դիմուոր են գրուում անհաւատների
դէմ կուռելու համար: Արեւտէում արդէն իսկ եկե-
ղեցականներն վաղուց հետէ պայտամքների հետ
են իսկ փանքերն ու մենաստաններն տեղի են պա-
շար ժողովելու և ապաստանարանի:

— Երուսաղէմի պատրիարքի աթոռը
Թափուր է: այժմ կուսակցութիւնները մրցում են
միմեանց հետ իրենց թեկնածուների համար: Յոյն
ազգի զրգուռած զրութիւնից գուշակում են, որ
այդ աթոռի վրայ ուսաց հակառակ մի թեկնածու
կը բազմի, այս մասին երկարօրէն խորհրդածու-
թիւններ է անում «նովոյէ Արեւմտայի» Կ. Պօլսի
թղթակիցը:

— Ռուսաց եկեղեցական բարձր իշխանու-
թիւնն առանձին ուշք է դարձնում եկեղեցիների
սակաւութեան վրայ և ջանքեր է անում տէրու-
թեան ու մասնաւորների օժանդակութեամբ եկեղե-
ցիների թիւը բազմացնելու:

— Ռուսական թեմերի առաջնորդներն ա-
ռանձին եռանդ են ցոյց տալիս քարոզչութիւնը զօ-
րացնելու: Բազմաթիւ այլադաւան, հեթանոս և
աղանդաւոր ռուս հպատակներին մի դաւանութեան
ընդունել է այդ քարոզչութեան նպատակը: սակայն
ցարդ քիչ յաջողութիւն ունենալով՝ այժմ այդ
անյաջողութեան պատճառներն են աշխատում բառ-
նալ:

— Մի ժամանակ ռուս մամուլը ձայն բարձ-
րացրեց հնադաւան ուսանքի իրաւունքներն ընդ-
լայնելու մասին. մի քանի թերթեր իրաւամբ նկա-
տեցին, որ այդ ուղղափառ ուսանքն աւելի քիչ
իրաւունքներ են վայելում, քան թէ հեթանոս
սիրերացի ցեղերի կրօնականները: Այժմ այդ խըն-
դիրը կրկին լուրթեան է տուած, մանաւանդ որ
երկկողմի եկեղեցականներն ևս չը մասնակցեցին
բանակաւուն և ոչ մի միտումն դէպի հաշտութիւն
ցոյց չը տուին:

— Ռուս հնադաւաններն (ստարոգէր) ապրում
են Նիժնի-Նովոգորոդի, Սարատովի և Սամարայի թե-
մերում: առաջինում նրանց թիւն է 70,000, երկ-
րորդում՝ 52,000, իսկ վերջինում՝ 81,000 հոգի:
զրանք բազմաթիւ են և Աւետիայի թեմում՝
(72,000), Զեմինդովում՝ (50,000), Պոլցկովում՝
(82,000), Իրիւտսկովում՝ (30,000), Տորոսկովում՝
(55,000) և Տոմսկովում՝ (82,000): հնադաւանների
Ամենից մեծ բազմութիւնն ունի Դոնի թեմը,
ուր նրանց թիւն է 106,000: Մինչդեռ հնադաւան-
ներն իրենց թիւը 8—10 միլիոն են հաշուում:
նրանց իսկական թիւն երեւի 3 միլիոնից չէ անցնում:

— Բալկանեան թերակղզու վրայ դեռ ևս շա-
րունակուում է եկեղեցական կոխը: Բոլղարները մա-
կեդոնական թեմերն հետզհետէ խլում են տիեզե-
րական պատրիարքի իշխանութիւնից: վերջերս սուլ-
թանը կրկին 3 թեմ է խոստացել բոլղարներին:

— Ռուսաց փառքերի թիւնն այժմ
հասնում է 742-ի, որոնց մէջ 42,940 փանկան
կայ: Այր մարդկանց փանքերի թիւն է 507, որոնց
մէջ 7464 միարան և 6152 փանկան եղբայրներ են
ապրում: Աուսաստանների թիւն է 235, ուր 7566
միարան կոյսերի հետ միասին կան 21,758 ծառա-
յող քղյրեր: Ամենից շատ փանքեր ունին Մոսկուա-
յի (46 փանք), Նովոգորոդի (33 փանք), Վլադիմիրի
(30 փանք) նահանգները: Ամենից սակաւ փանքեր
ունի Սիրիին, ուր իւրաքանչիւր նահանգում հազիւ
մի փանք կայ:

Վանքերին կից բարեգործական հաստատու-
թիւնների թիւը շատ օակաւ են: փանքերը պա-
հում են ընդամէնը 134 հիւանդանոց 1593 անկող-
նով և 84 աղքատանոց 1237 պատսպարեալներով:

Ծառայող եղբայրներն ու կոյսերը գրեթէ
անխտիր ողորմութեամբ են ապրում: նրանք ամեն
օր պտտում են քաղաքների փողոցներն ու մուրում:

Վերջին ժամանակներս Պետերբուրգից փոր-
ձեր են լինում փանկաններին զրգելու աւելի մեծ
մարդասիրական գործունէութեան: Քանիցս սինոդը
ազգաբարել է, որ ձրի զպրոցներ պահեն փանքերն
և ժողովրդական մատենադարաններ հիմնեն, սա-
կայն այս ազգաբարելութիւնները գրեթէ անհետեանք
են մնացել: Այսպիսի խնդիրներ շատ անգամ են
յարուցուել Ռուսաստանում և միշտ գործնական

Հետևանքից դուրս մնացել է կարծուում է որ դրա պատճառը վանականների ազդեցութիւնն է որոնց մեծամասնութիւնը հապիւ գրել կարգադրիւն է մինչև իսկ վանահայրեր կան որ անգրագէտ են :

— «Միասնական Օրոգրէնիկ» թերթին յայտ է յայտնում որ ուսւ աղանդաւորներն վերջապէս ճանաչելով իրենց սխալը պիտի միանան օրթոգրոս եկեղեցուն : Այդ յայտն հիմնուած է այն հրաշալի ազդեցութեան վրայ որ հնադասանների ու հերձուածողների վրայ գործել է Չեռնիգովի եպիսկոպոս Ե. Թէոդոսի մարմնի անփուտ մնալը 200 տարուան ընթացքում :

Շատ նշանաւոր են ուսւաց սինօգի Օրեր—պրօկոլոր Պորեզոնսցոփի դասնութեանց մասին յայտնած կարծիքներն որ այստեղ յառաջ ենք բերում քաղուածօրէն : Պորէզոնսցոփի այդ շարադրութեան վերնագիրն է «Եկեղեցին» ուր նա իւր կարծիքն է յայտնում օրթոգրոս կամօղիկ և բողոքական եկեղեցիների մասին :

Շարադրութեան հենց սկզբում յայտնուած է որ փոխադարձ զիջումների վրայ հիմնուած եկեղեցիների արհեստական միութիւնն մի անհնարին բան է : Շատ բաների մէջ կարող են դանաղանցեղերի մարդիկ և դանաղան դասնութեանց պատկանող անձինք իրար եղբայր համարել : Իսկ մի կրօնական միաբանակցութիւն կազմելու համար պէտք է մենք եկար ժամանակ միասին ապրենք :

«Այսպէս մի գերմանացի որ երկար ժամանակ Ռուսաստանումն է ապրել սովորում է ուսու պէս հաւատալու և ուսւ եկեղեցին իրեն ընտանի համարել : Այդ ժամանակ նա մտնում է մեր շրջանի մէջ դառնում է մեզանից մէկը : Նրա միաբանութիւնը մեզ հետ կատարեալ է և հոգեկան : Բայց որպէս զի մի բողոքական համայնք որ մեզնից հեռու է և համբաւով է ճանաչում մեզ գրքերի վրայ հիմնուելով կամ վարդապետութիւնների ու ծեսերի վերացական համաձայնութեամբս զայ և միանայ մեզ հետ իրեն ամբողջութեան մի մասն և հոգւով մի լինի մեզ հետ անհնարին է մինչև իսկ երեւակայելն : Մինչև այսօր ոչ մի եկեղեցական միաբանութիւն որ հիմնուած է եղել որոշ համաձայնութեան վրայ չէ յաջողուել : Վաղ թէ ուշ միշտ երևան է եկել այդ միաբանութեան սխալ հիմունքն և ամեն տեղ այդ միաբանութիւնը ոչ թէ սերն է աճեցրել այլ ընդհակառակն խորշումն և նոյն իսկ ատելութիւնը :

Քան լիցի մեզ միմեանց հաւատի համար կըշտամբեն : Թող ամէն ոք իւր ձեռով և իւր ընտելեան համար պատասխան ձեռով հաւատայ :

Ամեն ոք սակայն մի հաւատ ունի որ նրան

ընդել է որ նրա սիրտը գոհացնում է նրան սիրելի է և երբ նա մի այլ իրեն ոչ ցեղակից անհամարելի հաւատին է անցնում այն ժամանակ անկարող է նա չզգայ որ այդ հաւատն իրենին պէս չէ այլ սառն և անյարմար : Խելքը կարող է վերացական կերպով մտածել : Վայ մարդիկ էլ նոյն Աստուծուն են երկրպագում :—սակայն զգացում այդ դատողութեամբ չի գոհանալ : շատ անգամ զգում է մարդ որ իւր թէ օտար եկեղեցումն ունի Աստուծուն չէ երկրպագում : Շատերը կը ծիծաղեն այս զգացման վրայ : Թերեւ իսկ այդ սնոտիապաշտ ու մոլեռանդ զգացումն անուանեն : Բայց անհիմն է նրանց կարծիքը : Զգացումը միշտ խարուսիկ չէ : Նրա մէջ ճշմտութիւնը յաճախ ուղղակի և աւելի պարզ է արտայայտում քան թէ մտածողի մէջ :

Այսպիսի յառաջարկից յետոյ Պորէզոնսցոփը համեմատում է օրթոգրոս եկեղեցին կամօղիկ և բողոքական եկեղեցիների հետ և տալիս իւր արանքիւրի նկարագիրն :

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ :

— Քէնտրբրրի արքեպիսկոպոսի պաշտօնի մոնելն առանց միջնադէպի չանցաւ : Հին սովորութեամբ նորինաթի եպիսկոպոսը գահ բարձրանալուց առաջ եկեղեցական մի ձեւական ընտրութեան է նշանակուում որին մասնակցում են եպիսկոպոսներն և Քէնտրբրրի միաբանութիւնը : Երբ դոկտոր Տեմպլ պէտք է այդ ձեւական ընտրութեան նշանակուումի մի բողոքող գտնուեցաւ : Ծէսին համաձայն երեք անգամ հարցնում են թէ արդեօք ներկաներից ոչ ոք ընդդէմ չէ ընտրութեան : Այս առթից օգտուեց մի քահանայ Բրուքսֆորտ անունով և երեքուց մի քահանայ Բրուքսֆորտ անունով և երեքուց մի քահանայ Բրուքսֆորտ անունով : Տեմպլի ընտրութեան դէմ առաջնելով որ նա հետեւող է դարսինականութեան որ հակառակ է անգլիկան եկեղեցու դասնութեան : Այս բողոքը հարկաւ անհետանք մնաց և չը խանգարեց անգամ արարողութեան ընթացքն իսկ :

— Լոնդոնի քրիստոնէական տետրերի հրատարակութեան ընկերութիւնը տպագրել է իւր 1895 թ. հաշիւն որից երևում է որ այդ տարում 59 1/2 միլիոն տետր և գիրք է հրատարակած : որոնց մէջ 602 նոր հրատարակութիւններ : Այդ գրքերի համար ծախսուած է 1,500,000 ուոլլի դրամ : Նոյն ընկերութիւնը բացի ձրի և էժանագին գրքեր ու տետրեր բաժանելուց ոգնում է այլ քարոզական նպատակներ ունեցող ընկերութիւնների ևս :

— Ուսանողների ազատ քարոզական ընկերութիւնը 1300 անգամ ունի այս տարի որոնցից 300 արդէն քարոզում են դանաղան երկրներում 1000 հոգի պատրաստուում են նոյն նպատակի համար : ամեն օր ևս նորանոր անդամներ են աւելանում :

— Քննորդների արեւելահայոցն և Եօրքի եպիսկոպոսն պատասխանել են Լ. Լ. Լ. Ժ. Գ. պապի թղթին, որի մէջ չէ ճանաչում անդիկան ձեռնագրութիւնը: Այս տարիութիւնն հերքուած է մի պատասխանի մէջ, որ լատիններէն ու անգլիներէն տպագրուած և ուղարկուած է բոլոր կաթողիկէ եպիսկոպոսներին:

ԲՈՂՈՒՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Գ Ե Լ Ե Դ Ե Կ Ի Կ. — Գերմանական ազգն իւր միութեան մեծ յօրելեանը տօնեց մարտի 1-ին: Երբ լրացաւ հանգուցեալ Վիլհելմի Ա. կայսեր ծննդեան հարիւրամեակը: Այդ տօնախմբութեամբ գերմանացիք աշխարհի առաջ վիպելցին, որ իրենք այժմ մի միացեալ և հզօր ազգ են: Այս տօնիս հանդիսաւոր աղօթքներ և զոհարանութիւններ կատարեցան բոլոր եկեղեցիներում:

— Եկեղեցական մի նշանաւոր յօրելեան տօնեց լուծերական եկեղեցին փետրուարի 14-ին (ն. տ.): Երբ լրացաւ Մեղանխտնի ծննդեան չորսհարիւրամեակը: Լուծերի բարեկամ և բնկերը նրա ցափազանց եռանդը սահմանափակողը և բողոքական եկեղեցու գիտնական հիմնադիր Մեղանխտնն արժէր ան յարգանքին, որ նրան ձօնեց բողոքական աշխարհն: Բոլոր կրօնական թերթերը լի են այդ նշանաւոր անձի կեանքի ու գործերի յիշատակութեամբ և գումարութեամբ: Եօրքեանին Քրիստալինե Վէլյաւ շարաթաթերթը մի յատուկ համար է նուիրել, որ Գերմանիոյ նշանաւոր աստուածաբաններն իրենց կարծիքներն են յայտնել այդ մեծ մարդու մասին: Արդէն իսկ ժողովարարութիւն է սկսուել Մեղանխտնի ծննդաւայր Բրէտտէն քաղաքում մի յիշատակաց տուն կառուցանելու համար: Այդ տան մի մասն պիտի եկեղեցի լինի, միւս մասերում պիտի ժողովուրն Մեղանխտնի կեանքին և երկերին վերաբերեալ բոլոր հնագիտական երկերն:

— Աւետարանական եկեղեցուց 1890—1894 թ. գուրս են եկել 18,804 անձներ, իսկ միացել են նրա հետ 23,607 անձներ: Երկուսն որ այդ եկեղեցին չորս տարուան մէջ յաճել է 4803 զաւանակից: Այդ թուի մէջ հրեութիւնից դարձել են 2088 հոգի, կաթողիկոսութիւնից 17,002, զանազան զաւանութիւններից 4517 հոգի:

Հրեութիւն են ընդունել 61 անձներ, կաթոլիկ են դարձել 2794 հոգի, իսկ 15,944 հոգի փոխել են իրենց զաւանութիւնն և զանազան այլ զաւանութիւնների յարել: Աչքի է ընկնում կաթոլիկներից դարձողների մեծ քանակութիւնը:

— Հայ թշուառներն օգնութիւն հասցնելու խնդրում բողոքական եկեղեցականներն հետզհետեւ աւելի եռանդ են ցոյց տալիս: Գրեթէ բոլոր եկեղեցական թերթերն այժմ համակրանքով են խօսում

թշուառութեան մասնուած հայերի մասին: Հանուփերչէս Անտուգարատար իւր 9 համարում արպագրել է Վեսարիաից Բուսսա բերուած հայ որրերի պատկերն: Իսկ 10 համարում թարգմանարար հաղորդել Եղիշէից Աշտիշատի ժողովի գրած նամակի վերջաբանութեան չայսմ հաւատող զմեզ ոչ որ կարէ: . . . : Եւ զոյց տալու համար թէ հայերն հնումն ի՞նչպէս են կռուել քրիստոնէութեան համար:

Բ Ե Լ Գ Ի Կ. — Բողոքական քարոզութիւնը հետքահեւ զօրանում է այս կաթողիկէ երկրում: Մի քարոզչական ընկերութիւն 60 տարի է գործում է այն տեղ կաթողիկէներին անաստուածներին և անիշխանականներին աւետարանական դարձնելու: Մինչև այժմ 34 աւետարանական համայնք է կազմուել: Ամէն տարի 500 նոր հաւատաւորներ են աւելանում:

ԲԱԺԻՆ ՀԵԹԱՆՈՍԱՅ

— 2 ինաստանում քրիստոնէութիւնը թէև զանգաղ կերպով, բայց դարձեալ յառաջագիւնում է: Նորագոյն տեղեկութիւններից երևում է, որ 1842 թուականից միայն սկսուել է քրիստոնէութեան տարածումն այդ երկրում: 1855 թուին ընդամենը 500 զաւանակից ունէի, առում է անգլիացի միսիօնար գօհորթ Զոհն: 1860-ին նրանց թիւն հասաւ 1000-ի: 1890 թուին արդէն 38,000 հաւատացեալ կար պիտեզ, իսկ այժմ 70,000-ից աւելի են: Սրա վրայ պէտք է աւելացնենք նաև այլ բողոքական քարոյիչներին հետևողներն ու կաթողիկէներն:

— 2 ինաստանում ահա գործում է 10 տարուց ի վեր քրիստոնէայ գրականութեան ընկերութիւնը, որի նպատակն է շինացոյց քրիստոնէութեան դէմ ունեցած նախապաշարութները բառնալ:

— Մագազակարում կաթողիկէ և բողոքական միսիօնարները խանդարում են միմեանց: Բողոքականները թէև բազմաթիւ են, բայց չեն փայլում կառավարութեան հովանաւորութիւնը: Բողոքականներին մեծ հարուած եղաւ նաև նախկին թագաւորու արքայութեան:

— Ճաւա կղզում հռնոսեանական քարոզչական ընկերութեան շնորհիւ այժմ 15,000 մահմեդականութիւնից դարձած քրիստոնէայ կայ:

— Անգլիական միսիօնարական ընկերութիւնը ձեռնարկել է քարոզչութիւն Աֆրիկէի զաւաններէի մէջ, որոնք Միջին Աֆրիկէի անտառներում են ապրում:

